ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5561-Ա «13» նոյեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի Հ.3624-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 16.04.2026 թվականի եզրակացությունը, ըստ օրենքի 12.03.2026 թվականի ժառանգության իրավունքի վկայագիրը և քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2010 թվականի օգոստոսի 3-ի «Երևանի Ավանի 12-րդ փողոցի հ.8 բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Ռոբերտ Գագիկի Հովսեփյանի իրավունքները վերականգնելու, 11.72քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.3624-Ա որոշման/այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ «ք.Երևան, Ավանի 12-րդ փողոցի հ.8 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման»:

2) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին, 2-րդ, 3-րդ և 8-րդ կետերում «Ռոբերտ Գագիկի Հովսեփյանի» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը, փոխարինել «Հասմիկ Ռոբերտի Հովսեփյանի» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

3) Որոշման նախաբանում «Ռոբերտ Գագիկի Հովսեփյանի (ծնված 05.05.1942թ.)» բառերը փոխարինել «Հասմիկ Ռոբերտի Հովսեփյանի (ծնված 10.11.1976թ.)» բառերով:

4) Որոշման 3-րդ կետում «քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ